ARMENIA EITI Extractive Industries Transparency Initiative

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՈՂ ՃՅՈՒՂԵՐԻ ԹԱՓԱՆՑԻԿՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱՑ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ

դեկտեմբեր, 2017թ.

Արդյունահանող ճյուղերի թափանցիկության նախաձեռնությանը (ԱՃԹՆ) անդամակցության հանձնառությունը, որն ստանձնեց Հայաստանի Հանրապետությունը 2015 թվականի հուլիսի 28-ին ՀՀ վարչապետի կողմից արված պաշտոնական հայտարարությամբ, նպատակ ունի ապահովել երկրի հանքարդյունաբերության ոլորտի թափանցիկ և հաշվետու կառավարումը:

ԱՃԹՆ-ի ստանդարտի ներդրման արդյունքում նախատեսվում է հավաքագրել, մշակել և լայն հասարակությանը հասանելի դարձնել ոլորտին առնչվող մեծածավալ տեղեկատվություն: Այդ տեղեկատվության բովանդակությունը պետք է որոշվի ԱՃԹՆ-ի բազմաշահառու խմբի (ԲՇԽ) կողմից՝ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջների, ԱՃԹՆ-ի ազգային առաջնահերթությունների և ազգային համատեքստի համաձայն:

Այդուհանդերձ, ԲՇԽ-ն ընդունում է, որ անգամ բովանդակապես հարուստ և արդի տեղեկատվության մշակմամբ ու տրամադրմամբ հնարավոր է, որ չապահովվի վերջնական կարևորագույն նպատակը, այն է՝ տեղեկատվության հանրամատչելիության և լայն կիրառման արդյունքում ոլորտի վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացումն ու բարեփոխումների իրականացումը:

Ուստի, իրական թափանցիկություն ապահովելու տեսանկյունից ԲՇԽ-ն կարևորում է ոչ միայն տեղեկատվության բովանդակային հարցերը, այլև դրա հասանելիության ապահովման ձևն ու միջոցները:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ սույն փաստաթղթով ՀՀ ԱՃԹՆ ԲՇԽ-ն սահմանում է Հայաստանում ԱՃԹՆ-ի իրականացման շրջանակում բաց

տվյալների սկզբունքի իրականացման սկզբունքները և հայտնում իր հանձնառությունը հետևողական լինելու դրանց իրականացմանը:

Սկզբունքը կիրառելի է ԱՃԹՆ-ի շրջանակում հրապարակային տվյալների և տեղեկատվության համար՝ համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերի, Հայաստանի Հանրապետության օրենսդրության, ԱՃԹՆ-ի ստանդարտի և սույն հայեցակարգի:

Սկզբունքի կիրառումը դիտարկվում է ԱՃԹՆ-ի տարեկան զեկույցների հրապարակմանը զուգընթաց և ԱՃԹՆ-ի շրջանակներում հաշվետու կազմակերպություններին չի պարտավորեցնում կիրառել այն, սակայն, տվյալներ հրապարակելիս, ԱՃԹՆ-ի շահագրգիռ կողմերը խրախուսվում են առաջնորդվել բաց տվյալների սկզբունքով:

ԱՃԹՆ-ի համատեքտում բաց տվյալներն այն տվյալներն են, որոնք կարող են ազատորեն օգտագործվել, վերաօգտագործվել և տարածվել յուրաքանչյուրի կողմից՝ պահպանելով հեղինակային իրավունքները:

Բաց տվյալների սկզբունքի կիրառման վերաբերյալ ԱՃԹՆ-ի ստանդարտի պահանջները

ԱՃԹՆ-ի ստանդարտի 7.1-ին պահանջը սահմանում է, որ բազմաշահառու խումբը պարտավոր է՝

- համաձայնության գալ ԱՃԹՆ-ի տվյալների հասանելիության, հրապարակման և վերաօգտագործման հստակ քաղաքականության վերաբերյալ: Խրախուսվում է իրականացնող պետությունների կողմից ԱՃԹՆ-ի հրատարակումը բաց լիցենզիայով և օգտագործողների իրազեկումն այն մասին, որ տեղեկատվությունը կարող է վերաօգտագործվել առանց նախնական համաձայնության:

- ապահովել ԱՃԹՆ-ի զեկույցի հասանելիությունը բաց տվյալների ձևաչափով (xlsx, csv, docx)՝ առցանց և հանրայնացնել դրա հասանելիությունը:

ԱՃԹՆ-ի ստանդարտի 7.2-րդ պահանջը խրախուսում է ԲՇԽ-ին ապահովել ԱՃԹՆ-ի զեկույցի մեքենայաընթեռնելիությունը և ԱՃԹՆ-ի զեկույցների ու տվյալների ֆայլերի կոդավորումը կամ նշումն այնպես, որ հնարավոր լինի տեղեկությունները համեմատել հանրության համար հասանելի այլ տվյալների հետ՝ ընդունելով ԱՃԹՆ-ի խորհրդի կողմից հաստատված ԱՃԹՆ-ի տվյալների ստանդարտները:

Նպատակը

ԱՃԹՆ-ի շրջանակում հավաքագրված տեղեկությունների բաց տվյալների սկզբունքին համապատասխան հրապարակման նպատակը Հայաստանի հանքարդյունաբերության ոլորտում ավելի մեծ թափանցիկությունը, ԱՃԹՆ-ի նպատակների իրականացումը, ինչպես նաև մասնակցային կառավարումը, նորարարությունը և կայուն զարգացումը խթանելն է:

Բաց տվյալների սկզբունքին համապատասխան ԱՃԹՆ-ի տեղեկատվության հասանելիության ապահովումը կարող է անհատներին, քաղաքացիական հասարակությանը, լրատվամիջոցներին, գործարարներին և գիտակրթական հաստատություններին իրազեկել հարքարդյունաբերության ոլորտի մասին և ձևավորել տեղեկացված բանավեճի հարթակ:

ԱՃԹՆ-ի բաց տվյալների սկզբունքները

Սույն հայեցակարգը սահմանում է ԱՃԹՆ-ի շրջանակում հավաքագրված տվյալների հրապարակման հիմնական սկզբունքները: Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում ԲՇԽ-ն որոշում է կայացնում ԱՃԹՆ-ի ազգային զեկույցում ներառվող տվյալների շրջանակի, ինչպես նաև այդ տվյալների՝ բաց տվյալների ձևաչափով հրապարակման վերաբերյալ՝ համաձայն սույն հայեցակարգի:

Տվյալների ամբողջականությունը. ԱՃԹՆ-ի շրջանակում հրապարակված տվյալները պետք է լինեն հնարավորինս ամբողջական: Պետք է հրապարակվեն նաև ելակետային տվյալները (raw data), եթե դա չի հակասում օրենսդրությանը: Հրապարակվում են նաև ելակետային տվյալները բնութագրող մետատվյալները (metadata)՝ ներառյալ հաշվարկների համար օգտագործված մեթոդոլոգիան և բանաձևերը: ԲՇԽ-ն որոշում է, թե որ տվյալներն են ենթակա հրապարակման:

Տվյալների աղբյուրները. պետք է ներկայացվեն տվյալների աղբյուրները, ինչպես նաև որտեղից և ինչպես են այդ տվյալները ձեռք բերվել: Սա հնարավորություն կտա օգտագործողին համոզվելու, որ տեղեկատվությունը ձեռք է բերվել և արձանագրվել պատշաճ կարգով:

Տվյալների արդիականությունը. ԱՃԹՆ-ի շրջանակում հավաքագրված տվյալները պետք է ողջամիտ ժամկետում և առանց անհիմն ուշացումների հասանելի դառնան հանրությանը: Առաջնահերթ է այն տվյալների պատեհաժամ հրապարակումը, որոնց օգտակարությունն էապես կախված է ժամանակային գործոնից:

Տվյալների մատչելիությունը. ԱՃԹՆ-ի կողմից հրապարակված տեղեկատվությունը պետք է հնարավորինս մատչելի լինի՝ փնտրելու, գտնելու և ներբեռնելու տեսանկյունից:

Մեքենայաընթեռնելիությունը. տվյալներ ներկայացնելու որոշ ձևաչափեր ավելի հեշտորեն են ընթերցվում ծրագրերի և մեքենաների կողմից: Հետևաբար, տեղեկատվությունը պետք է հրապարակվի այդպիսի ձևաչափերով (օրինակ, xls, csv, xml կամ docx ձևաչափերը):

Տվյալների ոչ խտրական օգտագործումը. յուրաքանչյուր անձ պետք է հասանելիություն ունենա ԱՃԹՆ-ի շրջանակում հրապարակված տեղեկատվությանը՝ առանց ինքնության գրանցման և տվյալների օգտագործման համար հիմնավորում ներկայացնելու պահանջի:

Տվյալների կայունությունը. տվյալները պետք է հասանելի լինեն երկար ժամանակահատվածի ընթացքում: Սա նշանակում է, որ տվյալները պետք է պահպանեն հասանելիությունն առցանց արխիվներում: Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքը պետք է ապահովի տվյալների պահպանման և հասանելիության կայունությունը:

Տվյալների օգտագործման բաց լիցենզիան. ԱՃԹՆ-ի շրջանակում հրապարակված տեղեկատվությունը կարող է ազատորեն օգտագործվել յուրաքանչյուրի կողմից, սակայն, Հայաստանի ԱՃԹՆ-ին հղում կատարելով:

Տվյալների անվճար օգտագործումը. ԱՃԹՆ-ի ազգային զեկույցի շրջանակում տրամադրվող տեղեկատվությունը պետք է հասանելի լինի անվճար կարգով:

Հետադարձ կապը. հնարավոր դեպքերում ապահովել օգտագործողների հետադարձ կապի մեխանիզմներ՝ անհրաժեշտության դեպքում ապահովելու համար տվյալների որակի շարունակական բարելավումը:

Գործողությունները

ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը և ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն ԱՃԹՆ-ի ազգային նպատակներն իրականացնելու համար աշխատելու են իրենց գործունեության, ՀՀ ԱՃԹՆ-ի աշխատանքային ծրագրերի իրականացման, ԱՃԹՆ-ի ազգային զեկույցների հրապարակման, ԱՃԹՆ-ի շրջանակում տեղեկատվության և տվյալների հասանելության ապահովման ընթացքում առաջնորդվել սույն հայեցակարգով սահմանված բաց տվյալների սկզբունքներով, ինչպես նաև խրախուսել պատասխանատու պետական մարմիններին և այլ շահագրգիռ կողմերին համապատասխան

տեղեկատվություն հրապարակելիս նույնպես առաջնորդվել բաց տվյալների սկզբունքով:

ՀՀ ԱՃԹՆ-ի ազգային քարտուղարությունը և ՀՀ ԱՃԹՆ-ի ԲՇԽ-ն Հայաստանի ԱՃԹՆ-ի պաշտոնական կայքի (պորտալի) ստեղծման տեխնիկական առաջադրանքը կազմելիս և կայքի զարգացման աշխատանքներն իրականացնելիս առաջնորդվելու են բաց տվյալների սկզբունքներով ու հետևողական են լինելու, որ կայքում ներկայացված տեղեկատվությունն օգտագործողի համար լինի մատչելի՝ փնտրելու, գտնելու, օգտագործելու և ներբեռնելու տեսանկյունից: